«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ
"ARMENIAN WATER AND SEWERAGE" CJSC

www.armwater.am

21.01.15թ. N: ՀՀՄ-03/62
Ձեր N: ______________

## ՀՐԱՎԵՐ

**"Հայջրմուղկոյուղի"ՓԲԸ-ի Հեղուկ քլորի ձեռքբերման**
**N «ՀՀԳՆՁՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01»**

Հարգելի մասնակիցներ

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում *"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ*-ի (այսուհետև՝ Գնորդ) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված հեղուկ քլորի ձեռքբերումը*:* Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում *«ՀՀԳՆՁՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/15-15/01»*:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել *ք.Երևան, Վարդանանց փակ.8, 5-րդ հարկ* հասցեով, մինչև *2015թ. փետրվարի* 03-ը *ժամը՝ 15:00-ն:* Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար *Հայկ Հովհաննիսյանը*: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն *ք.Երևան, Վարդանանց փակ.8, 5-րդ հարկ* հասցեում, 2015թ. *փետրվարի* 03-*ին, ժամը՝ 15:00-ին:*

Գնման առարկա է հանդիսանում *"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ*-ի կարիքների համար հեղուկ քլորի ձեռքբերումը*:*

*"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ*-ի կարիքների համար հեղուկ քլորի ձեռքբերումը *և* (որը կազմված է **2** չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական․ և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում *(Հավելված N5)*, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ *(Հավելված N6):* Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Մասնակիցը հայտով ներկայացնում է առաջարկված ապրանքի ծագման երկիրը իսկ համարժեք գնման առարկայի դեպքում՝ ներկայացնում է համարժեք գնման առարկայի անվանումը և ծագման երկիրը:

*"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ*-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ hho@armwater.am: Հեռ՝ (055) 55-78-35:

Պատվիրատու՝ *"Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ*

***Ադմինիստրատիվ և ֆինանսական տնօրեն՝*** ***Ա. Մարտիրոսյան***

Գլխավոր գրասենյակ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Վարդանանց փակուղի 8ա
Head Office
8A Vardanants blind alley,
Yerevan, 0010, Armenia

1-71
info@armwater.am